

Իսրայէլի ներքին վիճակը աւելի լայն-
օրէն կարենալ տեսնելու համար, անոնք
իր իսկ բառերը «Որ ննջէք ի զահոյս
փղոսկրեայս, և փափկանայք յանկողինս
ձեր, և ուտէք ուլս ի հօտից և որթս գիւ-
ցիկս յանդուոց. որ կայծս հարկանէք ընդ-
դէմ սրնգաց, զորս իբրև զհաստատունս
համարեցայք, և ոչ անցաւորս. և ըմպէք
պարզեալ գինի, և անոյշ իւզով օծանիք»
(Զ⁴⁻⁶): Բայց այս զխտութիւնները առաջ
կուղային ինչպէս Ամոփս կը յիշատակէ
«... Գանձէին անօրէնութիւն և յափըշ-
տակութիւն ի զաւառս իւրեանց» (Գ¹⁰):
«Ի վերայ երկց ամբարշտութեանց Իսրայէ-
լի, և ի վերայ չորիցն՝ ոչ դարձայց ի նմա-
նէ, փոխանակ զի վաճառեցին զարդարն
արծաթոյ, և զտանակն ընդ կօշկաց. որ
կոխեն զհողս երկրի, և կոփեն զգլուխս
աղքատաց, և զճանապարհս աղքատաց
թիւրին. և հայր և որդի առ մի բոզ մտա-
նէին, զի պղծեցան զանուն Աստուծոյ
իւրեանցս (Բ⁶⁻⁸): Անոնք գոհացան այս-
քանով ու գործածեցին կեղծ իշխաններ
զիզելու իրենց հարստութիւնը անպատիւ
վաճառականութեամբ:

Կիներ ևս մարդոց նման կ'երեւին ան-
զուծ և կարծր սիրտ իրենցմէ վարի դա-
սակարգերուն հանդէպ: Հանրութեան և
անձնական առաքինութիւններն ալ նմանա-
պէս խաթարուած էին. դատարաններու
վճիռները, «արեւելքի երկիրներու հայհո-
յանքը» վայրագ էր: Աղքատը արգարու-
թիւն չէր կրնար գտնել դատարաններու մէջ,
ուր խղճմտանք և արգարութիւն բացէ ի
բաց կը ծախուէին ու կը դնուէին (Ե⁷⁻¹²):

Շուստանքի մէջ թախտուած, աղ-
նըւականները, ոչ մէկ նախանձախնդրու-
թիւն ցոյց տուին իրենց երկրի անկեալ վի-
ճակին: Վստահ իրենց հարստութեան շա-
րունակումին, անոնք բնաւ չուենցան վա-
խը դատաստանի մը (Զ¹⁻¹³):

Չեւական պաշտամունքը կը կատարուէր
բոլոր տաճարներուն մէջ. ողջակէզներ,
ճաշի բաշխումներ, և գոհարանական մաղ-
թանքներ շատ էին, իրենց թիւով: Նոր
լուսնի և Շարթի տօնակատարութիւնները
միշտ տեղի կ'ունենային: Անոնք իրենց զե-
խութեանց մէջ յուսով էին «ընտրեալ» ըլ-
լալու իրենց հանգամանքով, ու կ'ըսէին
«չէ՞ որ Եհօվան մեր մէջն է, ու չէ՞ որ
մենք կը կատարենք բոլոր այն պաշտա-
մունքները որ ինք կ'ուզէ. ու այս ամենէն
վերջ կրնա՞յ Ան մեզ երեսի վրայ ձգել»:

(Շար.) ԳԱՐԵԳԻՆ ԱՅԵՂԱՅ

Զ Ր Ն Ե Ջ Ե Ր

ՔԱՐՈՋ ԽԱՉԻ ՉՈՐՐՈՐԴ ԱԻՈՒՐՆ

Հետեւեալ փարոք արագրած ենք Ս. Արո-
նոյս ք. 231 գրչագրէն, որ Գանձգիրք-Տաղա-
րան մըն է (Տէս Սիոն 1949, էջ 63): Առա-
ջին մասին Գրիցն է Յակոբ, իսկ Սաացողը՝
Տէր Սարգիս, ըստ հետեւեալ յիշատակարանին.
«Այս սուրբ յարութիւնս ի ձեզ բարեխաւս
խորհրդարարստ եղբարք աղաչեմ զձեզ շարագին
դիմեալ յիշել զՏէր Սարգիս որ ետ գրեղ զսա
ի զարդ և ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ
և մանկանց Սիոնի, և զուխսագանց Յակոբս
գրիցուն գրիցս որ սևեռես եւ ի Քրիստոս
միտլ Տէր ողորմ [և] յայն յիշել ի սուրբ շրթունս
ձեր, և թիւրպայտիկ դուք յիշեալ յիշ[իք] ի
Քրիստոս Աստուծոյ մերեւ աւեկն» (ք, 131ք.):

Փարոքիս սնանկիքի գրեղը կը կազմեն
Պաւղոսի: Սոյն փարոքին այլուր չենք հանդի-
պած, ինչպէս նաև ուրիշ փարոքի՝ Պաւղոսի
գրչէն: Շարտարուած է վայելուչ ոճով և ճիշտ
ընթացով: Հետեւեալ քարոք քանակ զսևութիւն
Հայկազնեան Նոր Բաղդոսի մեջ. յուսանել,
քոցածաղիկ և անդիպակործան:

Պըսակ եկեղեցոյ ներկեալ արեամբ
արարչին, փայտ կենաց գաւազան յուսոյ
նըշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ
թըշնամոյն և կնիք հաւատացելոց, ասոյ-
եան հըզաւր անպարտելի որդւոց Նոր Սիոնի
ապաւէն ամրութեան, ահա ընկալցին եր-
կըրպագութիւնք մեր առաջի քո ի հաճոյս
բեւեռեցելոյն ի քեզ, աղաչեմք:

Աւերհեալ ես փայտ գերունակ և յոյս
ըզգալի տեսական, քանզի ի քեզ նըկարի
փայտն ազնական պահպանեալ ի բոցեղէն
սրովբէէն անհրպելի մարդկան և բնաւին
մարմնաւորաց, վասն որոյ գոյացուցիչ
զուարթնոցըն զանարատ բազուկս իւր ի
քեզ տարածեաց, զդառնութիւն լեղոյն
ճաշակեաց, զհուրըն հրանիւթ բացադրեաց,
զխաւարամած բանտըն լուսաւորեաց, զտա-
րամբոժեալսըն մերձաւորեաց, զվարատ-
եալսն ժողովեաց, զմերձակացեալսըն զգես-

տաւորեաց, զանէծսըն յաւրհնութիւն փոխարկեաց, և զհոգիս սրբոցն առ Հայր աւանդեաց, ահա ընկալցին...:

Աիւթեղէն արմատ և տունկ երկրաբոյս ծառ լուսանեղ բոցածաղիկ քաղցրութեան պըտղոյն, քանզի ի քեզ խորհրդածիւր գործուած նոյեան տապանին, տիպ քառանկեան նիւթ կազմածով եռակի նայև ծառըն սարեկայ բարձեալ խոյ փոխանակ Իսահակայ, իսկ ի քեզ կառուցեալ տէրըն բոլորից վերածգաւզն երկնից գերկըրպագուս խաչիդ ի մահաբեր կոհակէ ստորնայնոցս ապրեցոյց, ի դառնաշունչ մահաբեր ալեացըն խաղաղացոյց, յանդընդակործան սուզմանէ տըղմոյն բարձրացոյց, ի կենարարձ դըժնատես ցասմանէ սըրոյն զերծոյց և մաքուր թեւաք յերկինըս վերացոյց, ահա ընկալցին...:

Չամբար լուսոյ ջահ աննուաղելի խորհուրդ կըրկին այժմ և յապառնիսն, քանզի զքեզ գաղափարէր հուրն հրաշալի վառեալ մորենի նիւթ անծախելի, յոր հուպ եղեալ Մով[ս]եսի կոչման և փառաց եհաս նազելի, որ մարդկան սեռի է անձեռնարկելի, նըշան սատարի խաչանիչ գաւազանաւն հրոյ և ամպոյ և ակն աղիւսանըման շնորհել առաջնորդ ազգին Յակոբա, ուստի և այժմ ի ձեռըն փայտիդ կենսատուի, շնորհի պարգեւս իմանալի, ի ծառայութենէ յազատութիւն, յանդիտութենէ յԱստուածգիտութիւն, յերկուց ժողովըրդոց կոչեցեալ ի մի հաւտ ի նոր եկեղեցոյ ի պարծանըս խաչիդ և ի փառս որդոյն Աստուծոյ, ահա ընկալցին...:

Ով գերահրաշ նըշան սուրբ խաչի և աթոռ կազմողին երկնի և երկրի, աշտանակ լուսոյ ոսկի եւթնաջահ լուսոյն պաշտելի, քանզի ի քեզ բազմեալ թագաւորն անմահ կազմեալ սեղան արքայական և ուրախարար պատրաստեալ գինի, բարձրաձայն ազդէ ազանց ամենի, թողուլ զանըզամ գործս և ըզմիտս ունայնս, առնուլ լուծ քաղցր և բեռըն փոքրողի, գնալ ի վերա իժի և քարբի կոխել ըզգլուխ գազանին կամակորի, դու նըշան և կնիք ի դէմս ամենի դրոշմ ի ճակատ ի սիրտ և յոգի, ամէնաւրհնեալ անուն յիշելի, շնոր-

հիս ի կեանս և յաւր վախճանի, ի ճանապարհ և յաւթեւանի յաշխատութիւն և ի քնարանի, ի պատերազմ և ի բազմականի, ի գոեհըս վաճառաց և յեկեղեցի, ի բազմութեան և ի միայնակի, յահեղ աւուրըն համառաւտի դու նախագահ փայլմամբ յարեւելից ցոլացեալ երեւիս աներկըրպագուն գումարի ահարկու հըզաւր տեսիլ սոսկալի, ակնունողացըս յուսով գալըստեան փրկչին բոցանիչ թեւաքդ անբարբառ բարեխաւս, ահա ընկալցին...:

Սիրեցեալ էակից և բանդ Հաւր հաւասար սուրբ Հոգոյն Տէր Յիսուս Քրիստոս, ըզճըգնեալ արեամբ քո զեկեղեցի խաղաղացո(յ) անխախտելի ամբուլթեամբ, պահեա ի հաճոյս քո ընդ հովանեալ թեւոց կենսատու խաչիդ ըզհաւտապետըն մեր զկոչեցեալն ի քէն ընտրութեամբ ըզծառայն քո ըզտէր... զեպիսկոպոսունս երիցամ[բ]ք և սարկաւազաւք զպրաւք և համարէն ժողովըրդաւք ուղղափառ պաշտաւնէիւք, զվարդապետըս մաքուր միանձամբք և ըզգաստացեալ ուխտաւորք հաստատեա ի բանըս ճըշմարտութեան ի հաւատս ի յոյս և ի սէր, ահա յիշեցես...: Եւ եւս առաւել...: Զանձինըս մեր...:

Ի քեզ համբառնամք զաչըս մեր ըզգալի և զիմանալի, բարեխաւսութեամբ անարատ ծնողի քո և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին, հայցմամբ մեծի մարգարէին երկուց կտակարանաց միջնորդի առաքեալ Մըկըրտչին Յովաննու, նահատակութեամբ և հեղմամբ արեան ծառային քո Ստեփաննոսի նախազկա սարկաւազի և առաքեալ մարտիրոսի, խընդըրուածովք առաքելոցն և նախընտրեալ մարգարէիցն որովք ծանուցար ճըշմարիտդ Աստուած համայնից երկըրպագելի, պաղատանաւք աշխատասէր մըշակին քո հաւր մերոյ սըրբոյն Գրիգորի Հայաստանացըս Լուսաւորչի, հաւատարիմ քահանայապետի և յորդեգրութիւն երկնաւորիդ ըզմեզ կոչողի. սղորմեաց...:

Հրատ. Ն. Վ. ԾՈՎԱԿԱՆ